

# ՀԱԿԱՌԱԿՈՐԴԻՆ ԳԵՐԵՎԱՐԵԼՈՒ ՄԱՐՏԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ

*Ակնարկում նկարագրվում են մարտական գործողությունների վարման կարևոր տարրերից մեկի՝ գերի վերցնելու գործընթացի հիմնական ալգորիթմերը: Չնայած նրան, որ այն պահանջում է ավելի շատ պատրաստություն և ջանք՝ համեմատած հակառակորդի ուղղակի ոչնչացմանը, գերին ի վիճակի է տրամադրել շատ ավելի բարձր մակարդակի մարտական առաքելությունների համար կենսական նշանակություն ունեցող տեղեկատվություն:*

*ՊԱՀԱԿ*

Ռազմական հետախուզության պատմությունը սկիզբ է առել վաղուց, երբ մարդը դուրս եկավ մարդու դեմ, երբ ցեղերը, ժողովուրդներն ու ազգերը սկսեցին պատերազմել միմյանց դեմ, ռազմական հետախուզությունը դարձավ նրանց հիմնական զենքը:

Այսպես, արդեն մ.թ.ա. 5-րդ դարի երկրորդ կեսին չինացի զորավար Սուն Ցզին գրել է «Պատերազմի արվեստի մասին տրակտատը»: Այս աշխատությունը ներառում էր հին Չինաստանի ռազմական գիտելիքների հսկայական գործնական փորձը և պետության ռազմաքաղաքական ուսմունքի վերաբերյալ հիմնարար հայացքների համակարգը: Իր «Տրակտատում» Սուն Ցզին ուրվագծել է լայնածավալ պատերազմ վարելու ռազմավարությունն ու մարտավարությունը, ինչպես նաև առանձին ռազմական գործողությունների մարտավարական հնարքները: Նա առանձին գլուխ է նվիրել գործակալների օգտագործմանը և առաջ է քաշել լիակատար հետախուզության հայեցակարգը: Սուն Ցզին գրել է. «Նրանք մի քանի տարի պաշտպանվում են միմյանցից, բայց հաղթանակը որոշվում է մեկ օրում» (Գլուխ XIII, կետ 2): Նա կարծում էր, որ հակառակորդի մասին

գիտելիքները հնարավոր չէ ստանալ աստվածներից և դևերից, այլ միայն մարդկանցից, լրտեսներից: «Լրտեսների օգտագործումը պատերազմում ամենակարևորն է: Դա այն աջակցությունն է, որի վրա հույսը դնում է բանակը», - պնդում էր Սուն Ցզին: «Լրտեսները չափազանց կարևոր են բանակի համար, ուստի նրանք պետք է պարգևատրվեն բոլորից առավել, իսկ նրանց գործողությունները պահվեն խիստ գաղտնի: Լրտեսների գործունեությունը ղեկավարելու համար պետք է ունենալ կատարյալ գիտելիքներ, մարդկայնություն և արդարություն, նրբանկատություն և խորաթափանցություն» (Գլուխ XIII, կետ 13):

Հետագայում հետախուզության և հակահետախուզության բոլոր տեսաբանները հետևեցին մեծ չինացի մտածողին: Ամենահետաքրքիրն այն է, որ Սուն Ցզիի «Տրակտատից» մի քանի դար առաջ՝ առաջին ռազմական առաջնորդ և ռազմավարական գիտության հիմնադիր Թայ Գունային իր «Վեց գաղտնի ուսմունքները» աշխատությունում անդրադարձել էր այս խնդիրն: Ըստ որի լայնածավալ ռազմավարության հիմքը կազմում է թշնամու ուժը թուլացնելու, սեփական նյութական բազան ամրապնդելու, խաղաղ և պատերազմական ժամանակներում արդյունավետ պետական կառավարման համակարգ ստեղծելու մեթոդաբանությունը:

Կցանկանայինք հշատակել նաև մ.թ.ա. 4-րդ դարի մեկ այլ պատմական աշխատություն, որը կազմվել էր հին չինացի ռազմավարների կողմից և վերնագրված է «Սիմայի մեթոդները»: Այստեղ՝ քաղաքական և ռազմական դիմակայության հիմնական սկզբունքներից են համարվում հակառակորդի համապարփակ ուսումնասիրությունը, ուժերի հավասարակշռության կշռադատումը և դրա ճիշտ օգտագործումը, ինչպես նաև մոլորության մեջ ընկնելու հնարավորությունից խուսափելը: Նշվում է նաև հակառակորդի մտքում կասկած սերմանելու համար հոգեբանական մեթոդների կիրառման նպատակահարմարությունը: «Սիմայի մեթոդների» համաձայն՝ պատերազմը պետք է վարել «հեռուների դեմ լրտեսներին օգտագործելով, իսկ մերձավորներին՝ դիտարկելով և գործելով եղանակային պայմաններին համապատասխան»:

Հին ժամանակներից ի վեր տեղեկատվության ստացման մեթոդները գործնականում չեն փոխվել: Շտաբին և հրամանատարությանը նախկինի պես հետաքրքրում է հակառակորդի տեղակայումը, սպառազինությունը և թվաքանակը: Ունենալով այդպիսի տեղեկատվություն՝ կարելի է գնահատել իրավիճակը և մշակել մարտական գործողությունների ռազմավարություն: Ընդ որում, տեղեկատվության հավաքման օբյեկտներ կարող են հանդես գալ ոչ միայն պոտենցիալ հակառակորդները, այլև դաշնակից պետությունների երկրների զինված ուժերը: Այս մասին, որպես կանոն, ընդունված չէ բացեիբաց խոսել, քանի որ ցանկացած հետախույզի խնդիրն է ուշադրություն չգրավել և աննկատ գործել: Այնուամենայնիվ, ռազմական հետախուզության դերը նկատելի է դառնում հենց ռազմական բախումների ժամանակ, երբ զորքերն անմիջական շփման մեջ են մտնում հակառակորդի հետ:

Ռազմական հետախուզության կարևորությունը փայլուն կերպով արտահայտել է Պրուսիայի թագավոր Ֆրիդրիխ II Մեծը. «Երեք մարդ թշնամու գծի ետևում ավելի արժեքավոր է, քան հիսուն մարտիկ՝ ճակատում»: Հետախույզը միայնակ մարտիկ է

մարտադաշտում: Բոլոր իրավիճակներում նա պետք է հույսը դնի միայն իր վրա: Ցանկացած բանակային ստորաբաժանումում այս մասնագիտացումը համարվում է էլիտար: Հետախույզ դառնալը հեշտ չէ: Այն պահանջում է հմտությունների և գիտելիքների լայն շրջանակ, այդ իսկ պատճառով գոյություն ունի խիստ ընտրության գործընթաց: Ամենից առաջ, հետախույզը պետք է ունենա բնական, ֆիզիկական, բարոյական և մտավոր որակներ, այդ թվում՝ խորը և հայրենասիրական սեր Հայրենիքի նկատմամբ և իր զինվորական պարտքը մինչև վերջ կատարելու համար պատրաստակամ լինի դիմանալո ցանկացած դժվարություններին: Հետախույզը պետք է ունենա հավասարակշռված բնավորություն, լուսանկարչական հիշողություն, ուսանելու մոտիվացիա, իրավիճակը արագ գնահատելու և նորարարական որոշումներ կայացնելու ունակություն, ինչպես նաև բարձր մոտիվացիա հակառակորդին ոչնչացնելու գործում: Նա պետք է ֆիզիկապես պատրաստ լինի դիմանալու շոգին և ցրտին, կարողանա անցնել բազմաթիվ կիլոմետրեր դժվարանցանելի տեղանքով, անցնել հակառակորդի ականապատ դաշտերով և արգլապատնեշնրով, մարտնչել շարժման մեջ գտնվող հակառակորդի հետ կամ խուսափել նրա հետապնդումից, տիրապետել ձեռնամարտի հնարքներին, բոլոր տեսակի հրազենին և շեղբավոր զենքին, կարողանա կողմնորոշվել տեղանքում և որոշել հակառակորդի նշանակետերի և օբյեկտների կոորդինատները, ինչպես նաև կարողանա իրականացնել գաղտնի դիտարկում:

Հակառակորդի թիկունքում մարտարշավի ընթացքում հետախուզական խումբը լուծում է խնդիրներ, որոնք ուղղված են հակառակորդի տեղակայման վայրերի, սպառազինության, ստորաբաժանումների թվաքանակի վերաբերյալ տեղեկատվության հավաքագրմանը: Հետախույզների կողմից ձեռք բերված տվյալները հրամանատարությունն օգտագործում է ռազմաճակատի տվյալ հատվածում ստեղծված իրավիճակը գնահատելու և մարտական գործողություններ վարելու վերաբերյալ հետագա որոշումներ կայացնելու համար: Ռազմական հետախուզության վետերանների գործնական փորձի ընթացքում մշակվել են հակառակորդի մասին տեղեկություններ ստանալու երեք հիմնական հնարքներ, որոնք հետաքրքրություն են ներկայացնում բանակի հրամանատարության և բարձրագույն ղեկավարության համար.

- որոնում;
- դարանում;
- մարտով հետախուզում:

Այս մարտավարական հնարքներից յուրաքանչյուրն ունի իր առանձնահատկությունները, որոնց համաձայն փոխվում են նաև հետախուզում իրականացնող անձանց պարտականությունները:

**Որոնումը** հակառակորդի մասին տեղեկություններ հավաքելու տեսակ է: Այն ամենադժվարն է, որը պահանջում է հետախույզից առավելագույն կենտրոնացում և առաքելության մեկնելուց առաջ իր տիրապետած բոլոր հմտությունների կիրառում:

**Դարանումը** հակառակորդի վրա պլանավորված, անսպասելի հարձակում է: Ամենից հաճախ դարանման հիմնական նպատակը ոչ թե սպանելն է, այլ գերի, «լեզու»

ձեռքբերելը, որը տիրապետում է տեղեկատվության մեծ պաշարի և մեծ հետաքրքրություն է ներկայացնում հրամանատարության համար:

*Հետախույզի պարտականությունները դարանումը կազմակերպելիս հետևյալն են.*

- ուսումնասիրել խմբի նահանջի ուղիները առաջադրանքը կատարելուց հետո;
- անվտանգ դարձնել հետախուզական խմբի հավանական հետապնդման ուղիները՝ տեղադրելով ականներ, արգելապատնեշներ և այլ հատուկ սարքավորումներ, որոնք կխոչընդոտեն հետապնդմանը;
- հակառակորդին սպասելիս պահպանել քողարկման հնարավոր առավելագույն միջոցները;
- մարտական բախման պահին գործել նպատակասլաց՝ կենտրոնանալով հակառակորդին ոչնչացնելու կամ գերեվարելու առաջադրանքի կատարմանը՝ առանց շեղվելու երկրորդական նպատակներով;
- մարտի վարման ընթացքում չմոռանալ հիմնական նպատակի՝ հետախուզական տվյալների հավաքման մասին, որոնք հանդիսանում են օպերացիայի հիմնական նպատակը:

**Մարտով հետախուզման** էությունն այն է, որ հակառակորդի վերաբերյալ հետախուզական տվյալներ են ձեռք բերվում հարձակողական մարտական գործողությունների կիրառմամբ:

*Հետախուզական խմբի մարտավարական գործողության նպատակը* հակառակորդի տարածք ներթափանցելն է՝ «լեզուներ» ձեռք բերելու, հրամանատարության համար հետաքրքրություն ներկայացնող փաստաթղթերը հայթհայթելու, հակառակորդի ռազմական տեխնիկայի նմուշները ռազմաճակատի գիծն անցկացնելու համար:

Գերիների կալանումը սովորաբար տեղի է ունենում որոնման, դարանակալման, անսպասելի հարձակման և այլ իրավիճակներում: Պաշտպանված օբյեկտի դիվերսիայի, պահպանվող օբյեկտ ներթափանցման, առաջնագիծը հատելու և այլ իրավիճակներում կարող է անհրաժեշտություն առաջանալ մեկուսացնել ժամապահներին, աննկատ վերացնել պարեկային խմբերը և այլն: Այդպիսի առաջադրանքներ կատարելիս հետախույզները ստիպված են ձեռնամարտի մեջ մտնել հակառակորդի հետ, որտեղ հաղթանակը ձեռք է բերվում գերազանց հարձակողական և պաշտպանական հնարքների տիրապետման պարագայում:

Հակառակորդի վրա հարձակվելու ամենաարդյունավետ միջոցը թիկունքից է: Եթե անհրաժեշտ է հակառակորդին անաղմուկ գերի վերցնել, ինքնաձիգով կամ այլ ծանր առարկայով ուժեղ հարված հասցրեք զենքը պահող ձեռքին և անմիջապես մյուս ձեռքով (ինչ-որ շորով կամ ձեռնոցով) փակեք հակառակորդի բերանը, որպեսզի նա չգոռա: Կամ կարող եք թիկնոց-ուսանոցը (կամ շինելը) գցել նրա գլխին և բռնել նրա կոկորդը, որպեսզի նրա ադամախնձորը (кадык) հայտնվի ձեր նախաբազկի տակ: Ուժեղ հարվածեք հակառակորդի ծնկի հետևի մասին և տապալեք գետնին, այնուհետև քարշ տվեք նախապես որոշված վայր:

Մարտական իրավիճակներում հակառակորդին գերի վերցնելու համար խորհուրդ է տրվում կիրառել «մեկը երեքի դեմ» սկզբունքը՝ երեքով հարձակվելով մեկի վրա:

Հնարքներին ծանոթանալը և գերեվարման գործողությունները սովորելը կարող է իրականացվել, կախված եղանակից, մարզադահլիճում կամ մարզահրապարակում, ինչպես նաև որպես մարտավարության դասընթացներում անցնող մարզում:

**Իրավիճակ 1.** Գերեվարող խումբը մոտենում է ժամապահին ետևից: Գերեվարող խմբի հետախույզներից մեկը հնարավորինս անաղմուկ և արագ մոտենում է նրան ետևից, ձախ ձեռքով փակում է նրա բերանն ու քիթը և գլուխը թեքում ետ: Միաժամանակ աջ նախաբազուկով սեղմում է ժամապահի կոկորդը և աջ ձեռքը դնում հակառակորդի ձախ ուսին կամ բռնում է իր ձախ նախաբազուկը՝ ստեղծելով «կողպեք»: Այնուհետև ժամապահին թեքում է ետ, մինչև նա կորցնում է հավասարակշռությունը, սեղմում է նրան կրծքին, թեթևակի թեքվում առաջ, կիրառում խեղդող հնարք (Նկ. 1) սեղմելով նրա քներակային զարկերակը: Այդ ժամանակ երկրորդ հետախույզը բռնում է ժամապահի ձեռքերից, իսկ երրորդը՝ ոտքերից: Երեքն էլ արագ տանում են նրան գաղտնի վայր (Նկ. 2, 3):

Рис. 1

Рис. 2

Рис. 3

**Իրավիճակ 2.** Գերեվարող խմբի կողմից ժամապահի վրա հարձակվելու բարդ գործողությունների մշակում: Երբ գրաեվարման պահին հակառակորդը դիմադրում է և ձեռքից բաց չի թողնում իր զենքը, ապա խեղդող հնարքը իրականացնող մարտիկը պետք է ուժգնացնի բռնումը (хватка): Այդ պահին մյուս մարտիկը հարվածում է դիմադրողի մարմնի անպաշտպան մասին: Հաջորդ գործողությունը հակառակորդի ճկույթը կամ բութ մատը բռնելն է և այն կտրուկ մի կողմ թեքելը: Այս հնարքը թույլ կտա ձեզ վերցնել հակառակորդի զենքը, որը ընկել է նրա ձեռքերից (նկ. 4-6) և ձեռքերը կապել մեջքի հետևում կամ առջևում (նկ. 7, 8).

Рис. 4

Рис. 5

Рис. 6

Մոդելավորված իրավիճակի վերջնական մշակման համար անհրաժեշտ է իրականացնել հագուստի, իրերի արտաքին զննում, խուզարկում և հարցաքննել գերվածին: Եթե հետախուզական խումբը գերել է թշնամուն հակառակորդի թիկունքում, ապա ռազմագերու հարցաքննությունից հետո անվտանգության համար անհրաժեշտ է իրականացնել հետևյալ գործողությունները: Բացելով հակառակորդի բերանը և ձեռքի տակ գտնվող ցանկացած ցանկացած լաթով փակել: Այնուհետև, հուսալիության համար, գլխի ստորին հատվածը (բերանի մասում) շրջանաձև կապել պարանով կամ կպչուն ժապավենով (նկ. 9-11).

Рис. 7

Рис. 8

Рис. 9

Рис. 10

Рис. 11

Рис. 12

Որպեսզի գերին չտեսնի, թե իրեն ուր են տանում, աչքերը կապում են: Սրակալից (портупея), գոտուց կամ պարանից պատրաստված հանգույցը (петля), որով կապված է գերվածի ձեռքերը, իսկ մյուս ծայրը գտնվում է ուղեկցորդ պահակի ձեռքում, թույլ է տալիս գերեվարվածին հսկողության տակ պահել: Գերվածի տեղափոխումը պետք է իրականացվի զուգընկերոջ պահպանության ներքո (նկ. 12–14). Կախված իրավիճակից՝ գերին կամ ինքնուրույն է տեղաշարժվում, կամ հետախույզներից մեկը նրան զցում է ուսին և տանում իր նշանակման վայրը:

Рис. 13

Рис. 14

**Իրավիճակ 3.** Հակառակորդին մեքենայից դուրս հանելու և չեզոքացնելու արագ հնարքի կիրառումը: Բացելով մեքենայի դուռը, հետախույզը ձախ ափի հիմքով հարվածում է վարորդի կզակին, շրջում է դեպի աջ, մատներով սեղմում բերանը և քիթը և կտրուկ ձգում գլուխը դեպի իրեն: Այնուհետև աջ նախաբազուկով սեղմում է հակառակորդի կոկորդը, աջ ձեռքը դնելով նրա ձախ ուսին: Ճնշելով հակառակորդին, ստիպում է նրան կորցնել հավասարակշռությունը, սեղմում է կրծքին, մի փոքր թեքվում առաջ, ընթացքում աջ նախաբազուկով սեղմում է նրա քներակ զարկերակը, իրականացնում խեղդող հնարքը և դուրս է հանում մեքենայից (նկ. 15, 16).

Միաժամանակ երկու այլ հետախույզներ բռնում են հակառակորդի ձեռքերը՝ ոլորման միջոցով կիրառելով ցավեցնող հնարք, ապա կապում են ձեռքերը: Այնուհետև կատարվում է գերու իրերի, զույքի և փաստաթղթերի արտաքին զննում, ըստ անհրաժեշտության իրականացվում է հարցաքննություն: Դրանից հետո կարող եք լաթով փակել գերու բերանը և տեղափոխել նրան ուղեկցորդ պահակի աջակցությամբ (նկ. 17–19).

**Առաջարկություններ.**

Գերեվարման գործողությունների մարզումը պետք է իրականացվի չորսով՝ անընդհատ փոխելով դերերը։ Պետք է հիշել, որ երբ կոկորդը (բերանը և քիթը) սեղմվում է, 1,5–2 րոպե տեևողությամբ, տեղի է ունենում գիտակցության կորուստ։ Դրանից հետո հակառակորդը դիմադրություն չի ցուցաբերում և նրան կարելի է հանգիստ կապել ու գործել իրադրությունից ելնելով։

Մարտարշավի ժամանակ պոտենցիալ «լեզվի» (ռազմագերու) դիտարկումը պետք է սկսվի տեսողական հեռավորությունից, իսկ իրական գերեվարման գործողությունը՝ 3-10 մետր հեռավորությունից։ Դա անելու համար պետք է ուշադիր ուսումնասիրել տեղանքը և գաղտագողի ու անաղմուկ մոտենալ հակառակորդին։ Տեղաշարժվող պահակին կամ պարեկին մոտենալու համար կարիք չկա սողեսող մոտենալ։ Պարզապես պետք է նշել այն վայրը, որտեղ ինքը պահակը (պարեկը) կարող է առավել մոտենալ ձեզ, դիրքավորվեք այնտեղ և սպասեք։

Հարձակումը պետք է իրականացվի, երբ թշնամին մոտենում է և գտնվում է շահավետ դիրքում։ Կարևոր է սովորել օգտագործել տեղանքը և ձեռքի տակ գտնվող իրերը, ինչպես նաև եղանակային և կլիմայական պայմանները։ Օրինակ՝ ձմեռային ձնաբքի ժամանակ աղմուկն ու հարվածները լիովին լսելի չեն, ուստի գերեվարումը կարող է լինել լուռ և աննկատ։ Նույնը վերաբերում է նաև ուժեղ անձրևով ուղեկցվող ամպրոպի ժամանակ։ Բոլոր գործողությունները, այդ թվում՝ տեղափոխումը, կատարվում են կրակային աջակցության ներքո։ Գերեվարման պահին թշնամու գլխին կարելի է նետել վերնազգեստ կամ որևէ այլ շոր և խեղդել, որպեսզի գերին ձայն չհանի։ Այս դեպքում գերին ոչինչ չի տեսնում և կորցնում է կողմնորոշումը։

Գերեվարող խմբի բոլոր անդամները պետք է գործեն արագ և համակարգված։ Բոլորը պետք է հստակ իմանան իրենց առաջադրանքը և չպետք է միջամտեն մյուս հետախույզների գործողություններին։

Աղբյուրը՝ Журнал «Армейский сборник» N 3 2024г.(army.ric.mil.ru)